

# ՍԱՂՄՈՍ 58

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղոթք ամբարշտի պատժվելու համար	Ամբարշտի արդար դատաստանը	Անեծք թշնամիների վրա	Ամբարշտին պատժելու համար աղոթք ուղղված Աստծուն	Երկրավոր դատավորների Դատավորը
<i>MT ներածություն</i>				
Գլխավոր երաժշտին . Դավթի երգը «Մի ապականիր» <i>եղանակով</i>				
58:1-5	58:1-2	58:1-2	58:1-2	58:1-2
	58:3-5	58:3-5	58:3-5	58:3-5
58:6-9	58:6-8	58:6-9	58:6-9	58:6-8
	58:9-11			58:9-11
58:10-11		58:10-11	58:10-11	

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Այս Սաղմոսը անդրադառնում է անաստված դատավորներին և նրանց անարդար, եսականորոն շարժառիթներին:
- Բ. Այս առաջնորդները (այսինքն՝ խոյերը) նկարագրվում են որպես մեղսալից հենց իրենց ծննդյան օրից (տես՝ Սաղմ. 51:5, այսինքն՝ արևելյան չափազանցություն):
- Գ. Աստծո դատաստանը արդարացի կերպով է իջնում այն կրոնական հավակնորդների վրա, որոնք ծրագրած բռնություն են գործադրում:

Դ. Արդարը ցնծում է, որ Աստված գործում է չարիքի և ապականության դեմ: Նա մի օր արդարությամբ տիրելու է նոր աշխարհի վրա:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 58:1-5

<sup>1</sup>Իրոք դուք արդարություն եք խոսում, ո՛վ ժողովք,  
Ճշմարիտ դատաստան եք տեսնում, ո՛վ մարդկանց որդիներ:  
<sup>2</sup>Արդարև, սրտով անօրենություն եք գործում .  
Ձեր ձեռքերի խախտումները կշռելով եք մատուցում երկրի վրա:  
<sup>3</sup>Ամբարիշտներն իրենց մոր արգանդից շեղվեցին,  
Ծնվելուն պես սկսում են սխալ ընթանալ ու սուտ խոսել:  
<sup>4</sup>Նրանց թույնը օձի թույնի պես է,  
Խուլ իժի պես, որ փակում է իր ականջները,  
<sup>5</sup>Որ չլսի թովիչների ձայնը, թեև վարպետությամբ հմայում են:

**58:1** Որոշ հարցեր կան, թե ինչպես է պետք թարգմանել առաջին տողը: Ըստ երևույթին այն համազոր գուգահեռականության մեջ է երկրորդ տողի հետ:

❖	
NASB	«Ով աստվածներ»
NKJV	«դուք լուռ մնացողներդ»
NRSV	«դուք աստվածներ»
NJB	«ձեր պես աստվածային»
JPSOA	«ով հզորներ»
REB	«դուք իշաններ»

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 268) «լուռ» տերմինը գնահատում է «B» (որոշ չափով կասկածելի) և առաջարկում է նմանատիպ թարգմանություն՝ «Իրոք դուք լուռ արդարություն եք խոսում», այսինքն՝ իրոք դուք խոսում եք, որպեսզի լռությամբ թաքցնեք արդարությունը:

MT տալիս է ԺԼՁ, որը կարող է կապված լինել BDB 48-ի հետ (լռություն) կամ BDB 18 III (զորավոր տերեր): Որն էլ որ լինի, այն համազոր է երկրորդ տողի «մարդու որդիներ» խոսքին: Ուստի այն չի կարող նկատի ունենալ «աստվածներ», այլ քաղաքական գործիքների (այսինքն՝ դատավորներ, տես՝ Սաղմոս 82, Ելից 22:8-9, 2 Օրինաց 1:17, 2 Մնաց . 19:6) «խոյ» արմատից (BDB 17, տես՝ Ելից 15:15, 4 Թագ . 24:15, Եզեկ . 17:13, 31:11, 32:21, 34:17):

LXX, Փեշիտտա և Վուլգատտա թարգմանությունները փոխում են ձայնավորները կազմելով ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ, «Իրոք դուք արդարություն եք խոսում»:

**58:2-5** Այս համարները հայտնում են այս առաջնորդների իրական էությունը:

1. սրտով անօրենություն եք գործում, Սաղմ . 58:2
2. ձեր ձեռքերի խախտումները կշռելով եք մատուցում
3. մոր արգանդից շեղվեցին (տես ամբողջական գրառումը Սաղմ . 51:5-ում. սա մի արևելյան չափազանցության նկարագրություն է, ոչ թե աստվածաբանություն)
4. սուտ են խոսում իրենց ամբողջ կյանքում
5. ունեն օձի թույն
6. չեն լսում թովիչների ձայնը (բառացի՝ «շշունջը») – BDB 538, KB 527, այստեղ կիրառվում է օձի թովիչների համար: ՀՄԱ-ի մարդիկ կարծում էին, որ սրինգի ձայնը (կամ հնչյունները) հանգստացնում են օձին, սակայն այսօր մենք գիտենք, որ դա հենց սրինգի ռիթմիկ շարժումների շնորհիվ է, և ոչ թե ձայնի:

Աստվածաբանական շեշտադրությունն այն է, որ նրանք իրենց կամքով են մերժում լսել Աստծուն կամ նրանց, ում դատապարտում են:

Ես չեմ կարծում, որ «թովվածներին» պետք է հավասարեցնել կախարդության հետ այստեղ, այլ հանրային զվարճանքի համար մշակութային օձի գործերի հետ:

**58:2 «Երկրի վրա»** Այս համատեքստում սա վերաբերում է Իսրայելի երկրին, ոչ թե երկրագնդին: Հիշե՛ք, որ միայն համատեքստն է որոշում բառի իմաստը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 58:6-9**

**<sup>6</sup>Նրանց ատամներն իրենց բերանների մեջ փշրի՛ր, ո՛վ Աստված, Երիտասարդ առյուծների մեծ ժանիքները կտորատի՛ր, ո՛վ ՏԵՐ:**

**<sup>7</sup>Թող նրանք հալվեն անդադար հոսող ջրերի պես .**

**Երբ նա աղեղը լարում է, որ նետերն արձակի,**

**Թող դրանք կտոր-կտոր լինեն:**

**<sup>8</sup>Խխունջի պես, որ հալվում է, նրանցից ամեն մեկը**

**Թող կորստյան մատնվի,**

**Կնոջ վիժած զավակի պես թող արև չտեսնեն:**

**<sup>9</sup>Զեր կաթսաների փշերի տաքությունն զգալուց առաջ,**

**Իր բարկության մեջ մրկահողմի պես ցրիվ է տալու դրանք՝**

**Ե՛վ չորը, և՛ դալարը:**

**58:6-9** Այս պարբերությունը աղոթք է Աստծո (կիրառվում է թե՛ *Էրհիմը* և թե՛ ՅԱՀՎԵՆ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ), դատաստանի համար այս դատավորների վրա՝ գծագրված, բնութագրական արտահայտություններով:

1. կտորատի՛ր նրանց ատամները – BDB 248, KB 256, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ («ատամներ» և «ժանիքներ», համագոր են Հովել 1:6-ին):
2. փշրի՛ր (բառացի՝ «կտորատի») ժանիքները (BDB 1069) երիտասարդ առյուծների – BDB 683, KB 736, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (#1 և #2 համագոր են. թող դատաստանը տեղի ունենա հենց այն վայրում, որտեղ մեղանչում են /այսինքն՝ իրենց բառերի մեջ, իրենց դատավճիռներում/)
3. թող նրանք հալվեն անդադար հոսող ջրերի պես – BDB 549, KB 541, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. Թող նրանց աղեղները ապարդյուն լինեն (Եբրայերեն դարձվածքն անհայտ է, սակայն կարծես թե վերաբերում է նրանց անարդար դատավճիռներին և մեղադրանքներին):
5. Թող խխունջի պես լինեն (BDB 117, ՀԿ-ում միայն այստեղ է), որը հալվում է (BDB 588, այս ձևը կարելի է գտնել ՀԿ-ում միայն այստեղ, «տարրալուծվելը» BDB 587 է), երբ սողում է (BDB 229, KB 246, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, ենթադրյալ «լինել» ԲԱՅՐ կիրառված է ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով):
6. կնոջ վիժած զավակի պես թող արև չտեսնեն – BDB 302, KB 301, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (չնայած որ ԱՆԿԱՏԱՐ չէ, անմիջական գաղափարը պահանջում է, որ այն կիրառվի ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով): Խնդիրը ստույգ հասկանալու, թե ինչ նկատի ունի Սաղմ.58:8-ում, այն է, որ «խխունջ» և «վիժվածք» բառերի միջև զուգահեռականությունը հանցանքն է, սակայն ինչպես՝ անհայտ է: Երկրորդ տողում առկա տերմինը շատ ավելի հայտնի է, քան «խխունջ» և «հալվել» բառեր: NIDOTTE, հատոր 4, էջ՝ 30 առաջարկում է «խխունջ» բառը հասկանալ որպես «վիժվածք»:
7. Սա եբրայերենում դժվար համար է (AB անգամ չի փորձում այն թարգմանել): Մի քանի առաջարկներ են եղել: Հիմնական միտքն այն է, որ կաթսային անհրաժեշտ եփելու տաքությունը նախքան կերակուրը տաքացնելը անհետացել է:

Ծիշտ ինչպես նախորդ տողերը, այս ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ կարծես թե կիրառվում են ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով՝ Սաղմ.58:6-ի աղոթքի խնդրանքի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ հետ կապվելու համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 58:10-11**

<sup>10</sup>Արդարն ուրախանալու է, երբ վրեժխնդրությունը տեսնի .

Իր ոտքերն ամբարշտի արյան մեջ է լվալու:

<sup>11</sup>Այդպես մարդ կարողանալու է ասել .

«Իսկապես արդարի համար վարձատրություն կա .

Իսկապես Աստված է, որ դատում է երկրի վրա»:

**58:10-11** Մշտապես ժամանակակից մեկնաբաններին անհանգստացրել է, որ Սաղմոսները նմանատիպ դաժան դատաստանների կոչեր են անում հեղինակի թշնամիների դեմ: Սա դիտարկելու կերպերից մեկն այն է, որ այս թշնամիները հարձակվում են Աստծո վրա, երբ անարդար կերպով հարձակվում են Իր ժողովրդի վրա: Ուստի արդեն իսկ սահմանված դատաստանը (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30) օրինապես թափվում է նրանց վրա: Հետևաբար, սա վրեժխնդրության կամ հատուցման կոչ չէ, այլ արդարության և Աստծո խոսքերի իրականացման, որպեսզի բոլորը տեսնեն Իսրայելում Արդար Աստված կա (տես՝ 2 Օր. 32:34-43, Սաղմ. 79:10, 94:1-11, 149:7-9):

Սաղմ. 58:10-ը ՀՄԱ-ում ռազմական հաղթանակի համար չափազանցություն է (տես՝ Սաղմ. 68:23):

**58:11** Ես համաձայն եմ NET Աստվածաշնչի հետ, որ *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ, ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ, ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ է, որը նկատի ունի ՅԱՀՎԵԻ արդար դատաստանը:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ է ուղղված այս Սաղմոսը:
2. Արդյո՞ք Սաղմ. 58:3 սովորեցնում է առաջին մեղքի վարդապետությունը:
3. Ի՞նչ հոգևոր ճշմարտություն է փոխանցում Սաղմ. 58:4-ը:
4. Բացատրե՛ք Սաղմ. 58:8-ում համազոր զուգահեռականության պակասը:
5. Արդյո՞ք Սաղմ. 58:10-11 սովորեցնում է վրեժխնդրություն: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ՝ ոչ: